

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ
Թեմա ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԺԱՆՐԵՐԸ
Հետազոտող՝ ԱՂԱՎՆԻ ԱԼԵՅԱՆ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ №135 ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՇԻ

Ղեկավար՝ ՆՎԱՐԴ ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ

ԳՈՐԻՍ 2022

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Կերպարվեստի դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել մյուս առարկաների համար՝ կապը տեխնոլոգիայի և նկարչության հետ: Օրինակ՝ բնագիտական և հումանիտար առարկաների տեսական վերլուծությունները օգնում են կերպարվեստից ստացած գիտելիքները: Արվեստով և տեխնոլոգիայով պետք է զբաղվել ոչ միայն նկարչություն ընտրած սովորողներին: Դա զարգացնում է ճաշակ, գեղեցիկը նկատելը, գրագետ և գեղեցիկ հարաբերվելը և այլն: Արվեստով զբաղվելու նպատակը, գեղեցիկ և ճիշտ նկարելը չէ, այլ գեղագիտորեն դաստիարակված անհատ լինելն է: Պարապմունքը առավել հետաքրքիր է և արդյունավետ, երբ մի առարկան համագործակցում է մյուսի հետ: Կերպարվեստը սերտորեն կապված է՝ գրականության, բնագիտական և հումանիտար առարկաների հետ: Այս ամենը վառ արտահայտվում է ժանրային ստեղծագործություններում (պատմական դիցաբանական, դիմանկարի ժանրեր- հայրենագիտություն, բնանկարի ժանր-բնագիտություն, դիցաբանական պատմական ժանրեր-գրականություն, կենցաղային ժանր-տեխնոլոգիա): Ահա մի քանի նախագծեր, որը իրականացվել է հիմք ընդունելով միջառարկայական կապերի գաղափարները:



ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԺԱՆՐԵՐԸ

Կերպարվեստն ունի 8 ժանր:

Դրանք են՝ դիմանկար, բնանկար, անիմալիստական ժանր, դիցաբանական ժանր, պատմական ժանր, կրոնական ժանր, կենցաղային ժանր և նատյուրմորտ:



1. Այն ժանրը որտեղ պատկերվում է անշարժ անշունչ առարկաներ՝ սովորաբար տնային կահույք, մրգեր կամ էլ ծաղիկներ կոչվում է Նատյուրմորտ:
2. Գեղանկարում, գրաֆիկայում և լուսանկարչության մեջ կոնկրետ մարդու կամ մի խումբ մարդկանց պատկերը կոչվում է Դիմապատկեր:
3. Այն կերպարվեստի ժանրը, որը պատկերում է սուրբ գրքից կամ Աստվածաշնչից վերցրած թեմաներ կոչվում է Կրոնական ժանր:
4. Այն ժանրը, որը պատկերում է անցյալի ու արդիականության կոնկրետ պատմական իրադարձությունները, ինչպես նաև պատմական անձնավորությունների գործողությունները, կոչվում է՝ Պատմական ժանր:
5. Այն ժանրը, որը պատկերում է մարդկանց առօրյա կենցաղը կոչվում է Կենցաղային ժանր:
6. Այն ժանրը որը պատկերում է դիցաբանական սյուժեներ (տեսարաններ առասպելներից, հեքիաթներից, լեգենդներից) կոչվում է Դիցաբանական ժանր:
7. Այն պատկերը, որի մեջ պատկերված է բնություն կոչվում է Բնապատկեր:
8. Այն պատկերը, որի մեջ պատկերված են կենդանիներ կամ թռչուններ կոչվում է Անիմալիստական ժանր:

ԴԻՄԱՊԱՏԿԵՐ


Դիմապատկերը գեղանկարում, գրաֆիկայում, քանդակագործության մեջ և լուսանկարչության մեջ կոնկրետ մարդու կամ մարդկանց խմբի պատկերումն է:

Դիմապատկերը (ֆր.՝ portrait, հն. Portraire - պատկերել) կոնկրետ մարդու կամ մի խումբ մարդկանց պատկերն է կամ նկարագիրը, որը դրսևորում է կերպարվեստի տեսակների միջոցով՝ գեղանկար, գծանկար, քանդակ նաև լուսանկարչական արվեստ: Ժանրի առաջնահերթ խնդիրն է պատկերել մարդու բնորոշ դիմագծերը, նմանությունը: Վերարտադրելով մարդուն՝ տվյալ անձնավորության առանձնահատկությունները, նկարիչը միաժամանակ պատկերվողի դեմքի մեջ բացահայտում է նրա ներաշխարհը, անհատականությունը, ազգային ու հասարակական պատկանելությունը, ներգրավածությանը բնությանն ու գիտությանը: Արվեստում առաջին անգամ դիմապատկերը արտահայտվել է հնագյն շրջանի արվեստում (Եգիպտոս, Միջագետք, Հին Հունաստան, Հին Հռոմ), այնուհետև զարգացում է ապրել բոլոր ժամանակաշրջաններում մինչև մեր օրեր :





Հայ կերպարվեստում դիմանկարը ունեցավ իր հետևողական զարգացումը: Եզակի են միջնադարում ստեղծված դիմանկարները (Գագիկ առաջինի արձանը 9-րդ դ., 13- 14-րդ դդ., մանրանկարներում հանդիպող դիմանկարները և այլն): 17-18-րդ դդ., հայկական կերպարվեստում նկատվող միտումները իրենց հետքն են թողել նաև դիմանկարի վրա, որի լավագույն օրինակները հանդիպում ենք ինչպես բուն Հայաստանում (Հովնաթանյանների), այնպես էլ Հայաստանից դուրս (Մինաս, Հովհաննես Մրքուզ, Բոգդան Սալթանով(Աստվածատուր Սուլթանյան) և այլք): Հայ կերպարվեստում դիմանկարի ժանրի հիմնադիրն է Հակոբ Հովնաթանյանը: Նա Հովնաթանյանների մեծագույն տոհմի վերջին ներկայացուցիչն էր, որն իր մեջ ամփոփեց տոհմի հանճարը և սկիզբ դրեց հայ կերպարվեստի նոր դարաշրջանին: Նա առաջինն էր որը ստեղծեց աշխարհիկ բովանդակությամբ դիմապատկերներ:Դիմապատկերի ժանրում աշխատել են հայ կերպարվեստի գրեթե բոլոր ներկայացուցիչները (Ռուսին,Պիծակ, Սուրենըանց, Սարյան Մինաս,Գորկի և այլն) : Դիմապատկերի ժանրը զարգացավ և ընդգրկվեց արվեստի բոլոր իզմերում և ժամանակաշրջաններում :





ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ

Նատյուրմորտը գեղանկարում, գրաֆիկայում, քանդակագործության մեջ և լուսանկարչության մեջ անշունչ և անկենդան առարկաների պատկերումն է:

«Նատյուրմորտ» ֆրանսերեն է. Նշանակում է մեռած բնություն: Նատյուրմորտի մոտիվները՝ որպես կոմպոզիցիայի մանրամասներ, գոյություն են ունեցել հին արևելյան, անտիկ և միջնադարյան արվեստներում: Նատյուրմորտը՝ որպես ինքնուրույն ժանր (գլխավորապես հաստոցային գեղանկարչության մեջ), սկզբնավորվել է նոր ժամանակի եվրոպական արվեստի կազմավորմանը զուգընթաց: Վերածննդի շրջանի իտալացի մասնավորապես նիդեռլանդացի վարպետները իրենց աշխատանքներում կարևորել են նյութական աշխարհը, իրերի զգայական գեղեցկությունը:


Նատյուրմորտը՝ որպես գեղանկարչության ժանր, սկզբնավորվել է իտալացի նկարիչ Յակոպո դե Բարբարի նատյուրմորտ (1504թ.) աշխատանքով, սակայն առավել տարածվել է XVI դարի 2-րդ կեսին և XVII դարի սկզբին :Իտալական նատյուրմորտի զարգացմանը նպաստել են Կառավաջոյի նորարական բարեփոխումները, որոնց ազդեցությունը նկատելի է նաև իսպանական նատյուրմորտներում:Ժանրի զարգացմանը նպաստել են նաև XX դարի նկարիչները Պաբլո Պիկասսոն (Ֆրանսիա), Ջորջ Մորանդին (Իտալիա), Դավիդ Միկելյոսը (Մեքսիկա), Կուզմա Պետրով-Վոդկինը (Ռուսաստան) և ուրիշները:



Հայկական կերպարվեստում նատյուրմորտի մոտիվներն արտացոլվել են միջնադարյան մանրանկարչության մեջ: Առաջին նատյուրմորտների հեղինակը նկարիչ Մինասն է(XVII դար): Նատյուրմորտը՝ որպես ժանր, Հայաստանում վեջնականապես ձևավորվել է XIX դարի վերջին, որի նշանավոր ներկայացուցիչը Ջաքար Ջաքարյանն է: XX դարում նատյուրմորտներ են ստեղծել Վարդգես Մուրեկյանցը, Հմայակ Հակոբյանը, Եղիշե Թադևոսյանը և ուրիշներ: Հայ նոր գեղանկարչության մեջ ազգային նատյուրմորտը սկզբնավորվել է Մարտիրոս Մարյանի գործերով:

1950-70-ական թվականներին Հարություն Կալենցը, Գրիգոր Խանջյանը, Մինաս Ավետիսյանը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ իրենց նատյուրմորտներում ստեղծել են դեկորատիվ, հոգեբանական, կառուցվածքային և այլ խնդիրներ:





ԱՆԻՄԱԼԻՍՏԻԿԱ

Անիմալիստիկա (Անիմալիստական ժանր), երբեմն նաև Անիմալիզմ (լատ.՝ animal – կենդանի), կերպարվեստի տեսակ, որի հիմնական օբյեկտները հանդիսանում են կենդանիները գլխավորապես գեղանկարչության, լուսանկարի, քանդակի, գրաֆիկայի մեջ և հազվադեպ՝ դեկորատիվ արվեստում: Անիմալիստիկան ներառում է իր մեջ բնագիտական և գեղագիտական հիմքեր: Անիմալիստի գլխավոր խնդիրներն են ինչպես կենդանու ճշգրիտ պատկերումը, այնպես էլ գեղարվեստորեն ձևավորված հատկանիշների արտահայտումը՝ դեկորատիվ արտահայտչամիջոցներով կամ նրանց մարդուն բնորոշ հատկանիշներով, արարքներով ու զգացողություններով օժտելով (օրինակ առակներում կամ հեքիաթներում):

Քանդակից տարածում է գտել անիմալիստական խեցեգործությունը:

Կենդանիների ձև ստացած ֆիգուրների գոյությունը տեսնում ենք Հին Արևելքի, Աֆրիկայի, Օվկիանիայի, Հին Ամերիկայի բազմաթիվ երկրների հին արվեստի բանահյուսության կենդանիների ոճով հուշարձաններում: Առաջին անիմալիստական աշխատանքները ստեղծվել են նախնադարյան ժամանակաշրջանում, երբ նախնադարյան մարդը քարանձավի պատերին պատկերել է ուսի տեսարաններ (Ավստրիայի Ատամփրա քարանձավ, բիզոն, մամոնտի պատկերներ): Համաշխարհային արվեստում անիմալիստական ժանրի աշխատանքների ենք հանդիպում Եգիպտական, Հունական, Հռոմեական և այլ մշակույթներում : Այս ժանրում աշխատել են՝ Ալբերտ Դյուրերը, Ֆրանց Մարկը, Իվան Ծիշկինը և որիշներ :

Անիմալիստական ժանրում աշխատող նկարիչներին անվանում են «անիմալիստներ»:

Անիմալիստների գործերը առանձնանում են կենդանական աշխարհի նուրբ իմացությամբ, կերպարների դեկորատիվ արտահայտչականությամբ: Հայ արվեստում առաջին անիմալիստական գործերի հանդիպում ենք ժայռապատկերային արվեստում (Սյունիքի՝ Ուխտասար, Գեղարքունիքի՝ Աժդահակ, Վայքի՝ Ջերմուկի լեռներ և այլն): Հայ արվեստագետներից



անիմալիստական բազմաթիվ գործեր են ստեղծել քանդակագործ Հ. Գյուրջյանը և Վ. Այվազյանը:




ԲՆԱՆԿԱՐ



Բնանկարը տեսարանի կամ որևէ տեղանքի պատկեր է, գլխավորապես գեղանկարչության և գրաֆիկայի մեջ, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործության, որի պատկերման առարկան բնությունն է: Շատ անգամ ֆոն է ծառայում հարթաքանդակում, գեղանկարում և գրաֆիկայում: Բնանկարը բնության ձևերի և երևույթների, լույսի, օդի, տարածության գեղարվեստական արտացոլումն է՝ պայմանավորված հեղինակի աշխարհայացքով, մտքերով և զգացմունքով: Բնանկարի առանձին տարրեր ձևավորվել են Հին աշխարհի արվեստում: Ինքնուրույն զարգացել է Չինաստանում Տան (VIII-IX)դդ և Սուն (X-XIII) դդ շրջաններում: Եվրոպայում ձևավորվել է, որպես ավարտուն ժանր XVII դարում:

Բնանկարը կերպարվեստի ինքնուրույն ժանր է, ինչպես նաև կարևոր դեր ունի պատմական և ժանրային նկարներում: Բնապատկերային գեղանկարչությունը բազմադարյան պատմություն ունի: Վերածննդի դարաշրջանի նկարիչներն իրենց նկարներում հաճախ ներառել են այնպիսի բնապատկերներ, որոնք արտացոլում էին հստակ այս կամ այն տեղանքը (Դա Վինչիի կտավները): Բնանկարի ժանրը լայն արտահայտչաձև ստացավ իմպրեսիոնիզմի շրջանում, երբ ներկայացուցիչները դեմ դուրս գալով ընդունված բարբերին դուրս եկանք փողոց, այգիներ, պուրակներ, դաշտեր և նկարեցին բնությունն իր ողջ գեղեցկությամբ (Կ.Մոնե, Կ.Պիսարո, Վան Գոգ, Պ.Գոգեն և այլն): Ռուս արվեստում իր բնանկարներով առանձնանում է Ի. Լևիտանը





Փայլուն բնանկարներ են կատարել հայ վարպետները: Դեռևս միջնադարյան ձեռագրերում (Կիլիկյան դպրոց՝ Թ. Ռոսլին, Վասպուրականի դպրոց,) հանդիպում ենք բնամատկերների: Բնության պատկերմանն են անդրադարձել նաև Գ. Բաշինջաղյանը, Մ. Սարյանը, Մ. Ավետիսյանը, Հ.Այվազովսկին և այլն: Բնանկարի զարգացման շրջանը բնորոշվում է նրանով, որ արվեստի ցանկացած ձևում և ժանրում արտահայտվում է մարդու և շրջապատող միջավայրի նկատմամբ եղած վերաբերմունքի ոչ միայն փորձը, այլ նաև մարդը դիտարկվում է որպես բնության մի մասնիկ, նրանում ունեցած իր տեղով ու դերով:





ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՆՐ

Պատմական ժանր, կերպարվուստի հիմնական ժանրերից մեկը՝ նվիրված է պատմական իրադարձություններին և գործիչներին, հասարակության պատմության սոցիալական նշանակալի երևույթներին: Պատմական ժանրը ներառում է նաև ոչ հեռավոր անցյալի իրադարձությունների պատկերումը: Պատմական ժանրի ստեղծագործությունների հիմնական տեսակներն են՝ պատմական նկարները, որմնանկարները, ռելիեֆներն ու բուրբաքանդակները, հաստոցային գրաֆիկային գործերը: Պատմական ժանրը հաճախ միահյուսվում է այլ ժանրերի կենցաղային ժանրին (պատմակենցաղային պատկերներ), դիմապատկերներին (անցյալի գործիչների պատկերումներ, պատմախմբապատկերային կոմպոզիցիաներ), բնանկարին («պատմական բնանկար»): Պատմական ժանրին հատկապես մոտ է մարտանկարչությունը: Պատմական ժանրի էվոլյուցիան շատ բանով պայմանավորված է պատմական հայացքների զարգացմամբ, իսկ նրա վերելքի փուլերը կապված են մինչ – սոցիալական հասարակարգերում սոցիալական բախումների ուժեղացման, դասակարգային և ազգային ինքնագիտակցության աճի, արվեստում առաջադեմ հասարակական իդեալների մարմնավորման ձգտման հետ: Պատմական ժանրում իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել պատմական ուժերի դրամատիկական բախումները, դասակարգային և ազգային-ազատագրական պայքարը: Պատմական ժանրի հնագույն նմուշներից է Եգիպտոսից հայտնաբերված, հեննիստական շրջանում արված «Գավգամելայի ճակատամարտը» խճանկարը : Եվրոպական արվեստում պատմական ժանրը վառ արտահայտվեց կլասիցիզմի շրջանում՝ Ժակ Լուի Դավիդի, ռոմանտիզմի շրջանում՝ էժեն Դելակրուայի աշխատանքներում : Պատմական ժանրին անդրադարձել են նաև որուսական արվեստում Ի.Բեպինը, Վ.սուրիկովը :



Գավգամելայի ճակատամարտը (խճանկար)



Անդրադառնալով հայոց պատմության կարևորագույն իրադարձություններին հայ նկարիչները ևս անդրադարձ են կատարել պատմական ժանրին: Վաղ օրինակների հանդիպում ենք միջնադարյան արվեստում՝ Ռուպինի մանրանկարներում: Անհնար է չհիշատակել Գրիգոր Խանջյանին, ևս ստեղծել է համաժողովրդական սեր վայելող «Վարդանանք», «Հայոց այբուբեն», «Վերածունդ» մեծածավալ նկարները: Հայ արվեստում պատմական ժանրի հիմնադիրը համարվում է Վարդգես Մուրենյանցը, ևս իր ստեղծագործական ողջ շրջանում անդրադարձել է պատմական թեմաներին: Ժանրի զարգացման գործում մեծ է նաև Է. Իսաբեկյանի դերը:





ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԺԱՆՐ

Կենցաղային ժանր, (ժանրային նկարչություն ֆր. genre բառից) կերպարվեստի ժանր, որ պատկերում է անձնական և հասարակական, առօրյա կյանքը: Կենցաղային ժանրում առաջատար է կենցաղային (ժանրային գեղանկարչությունը), մասամբ՝ գրաֆիկան և քանդակագործությունը:

Կենցաղային ժանրի զարգացումը ընթացել է կենցաղի փաստական վավերացումից դեպի առօրյա կյանքի երևույթների ներքին իմաստի և հասարակական-պատմական բովանդակության հոգեբանական բացահայտումը: Կենցաղային պատկերները հայտնի են հնուց (նախնադարից՝ որսի, ծեսերի տեսարաններ), սակայն, որպես արվեստի հատուկ ժանր առանձնացել է ֆեոդալական դարաշրջանում (Հեռավոր Արևելք) և բուրժուական հասարակարգի ձևավորման շրջանում (Եվրոպա):



Միջին դարերում ժանրային տեսարանները հաճախ միահյուսվել են կրոնական և այլաբանական կոմպոզիցիաներին: 7-13-րդ դարերում Չինաստանում կազմավորվել և գործել են ժանրային գեղանկարչության դպրոցներ:

Վերածննդի դարաշրջանում եվրոպական գեղանկարչության մեջ մեծ տեղ է տրվել կենցաղային մանրամասներին: Գեղանկարիչները պատկերել են մարդկանց առօրյա կյանքի և կենցաղի զանազան իրավիճակներ, օրինակ շուկաներ, փողոցներ, երեկույթներ, ինջույքներ:

17-րդ դարի վերջին առօրյա կյանքի ժանրում ի հայտ եկան երկու հիմնական միտումներ: Եվրոպայում գերակշռում էր ռոկոկոյի պաշտամունքը, ուստի զարմանալի չէ, որ արվեստագետները փորձեցին խմբագրել առօրյա տեսարանները, դրանք դարձնել նրբագեղ և բարդ: Ահա այսպես հայտնվեց «գալանտ նկարչությունը», որում շատ հաջողակ էին այնպիսի վարպետներ, ինչպիսին էր Սան Բապտիստ Միսեոն Շարդեն: Նրա նկարները, որպես կանոն, արտացոլում էին բարձր դասի կյանքը և առանձնանում էին մանրամասների լուսանկարչական ճշգրտությամբ:



Կենցաղային ժանրի առաջադիմական զարգացումը կապված է դեմոկրատական և ռեալիստական միտումների աճի, սոցիալական խնդիրների լայն ընդգրկումով աշխատավոր ժողովրդի կյանքն ու աշխատանքը պատկերող արվեստագետների գործունեության հետ, այս ամենը վառ արտահայտվեց նաև իմպրեսիոնիզմի և պոստիմպրեսիոնիզմի շրջանում :


19-րդ դարի երկրորդ կեսին, երբ իմպրեսիոնիզմի ալիքը տարածվեց Եվրոպայում, ամենօրյա նկարչության մեջ մի նոր միտում հայտնվեց՝ կապված մարդկանց կյանքի պատահական տեսարանների պատկերման հետ: Փողոցում անցողիկ էսքիզները վերածվել էին եռուկապ նկարների՝ լի կախքով ու

շարժումներով: Մինչ օրս Էդուարդ Մանեի, Օգյուստ Բենուարի, Էդգար Դեգասի, աշխատանքները տեսողական արվեստում առօրյա կյանքի ժանրի չափանիշն են:



Ժանրային պատկերին մեծ տեղ է տրվում նաև քանդակագործության և գրաֆիկայի մեջ: Կենցաղային տեսարաններով և մանրամասներով հարուստ են Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված ժայռապատկերները, միջնադարյան տապանաքարերը, Աղթամարի և այլ ճարտարապետական հուշարձանների բարձրաքանդակները, ձեռագիր մատյանների մանրանկարները:


Կենցաղային ժանրի ուշագրավ գործեր են ստեղծել հայ արվեստում Վ. Սուրենյանցը, Հ. Արծաթպանյանը, Ե. Թադևոսյան, Է. Շահին, Հ. Կոչոյանը, Գ. Խանջյանը: Կենցաղային ժանրում արտահայտվել են մեր հայրենիքի վերափոխման թափն ու առօրյա կյանքի ողջ բազմազանությունը:



ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՆՐ

Դիցաբանական ժանրը կերպարվեստում, կերպարվեստի ժանր, որը պատկերում է դիցաբանական սյուժեներ՝ տեսարաններ էպոսից, առասպելներից, հեքիաթներից, լեգենդներից: Դիցաբանություն, միֆոլոգիա, հուն.՝ mythos-ասք, ավանդագրույց և հուն.՝ logos-խոսք, ուսմունք բառերից, բանահյուսական ավանդագրույցներ, որոնց մեջ շատ պատկերավոր արտացոլված են Հին աշխարհի ստեղծման, բնության երևույթների և մարդկանց կյանքի մասին հին ժողովուրդների պատկերացումները: Համաաշխարհային մշակույթում նշանակալի դեր ունեցան հին հույների առասպելները: Հին հույն քանդակագործ Ֆիդիասը կերտել է Աթենաս աստվածուհու հանրահայտ քանդակը, որը համարվել է հին աշխարհի 7 հրաշալիքներից մեկը: Դիցաբանական ժանրը ձևավորվել է վերածննդի դարաշրջանում, երբ հնագույն լեգենդները ամենահարուստ սյուժեներն են տվել Սանդր Բոտիչելլի, Անդեա Մանտենյայի, Ջորջոնեի նկարներին, Ռաֆայել Սանտիի ֆրեսկոներին: <<Վեներայի ծնունդը >> նկարում Բոտիչելլին ստեղծել է սիրո աստվածուհու ամենապոետիկ կերպարը:






17-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը զգալիորեն ընդլայնվում է դիցաբանական ժանրի նկարների ներկայացումը: Նրանք հանդիսանում են, որպես բարձր գեղարվեստական արժեքներ Նիկոլա Պուսսենի, Պետեր Պաուլ Ռուբենսի, Դիեգո Վելասկեսի, Ռեմբրանդ վան Ռեյն գեղանկարները, ստեղծում են տոնական տրամադրություն Ֆրանսուա Բուշեի ստեղծագործություններում: 19-րդ դարում դիցաբանական ժանրը կերպարվեստում հասնում է կատարելության Ժակ Լուի Դավիդի, Դոմինիկ Էնգրի, Լև Իվանովի գեղանկարները: 20-րդ դարի սինվոլիկան և ժամանակակից ոճը նոր հետաքրքրություն են առաջացնում դիցաբանական ժանրում Մորիս Դենիի, Միխայիլ Վրուբելի: Այն վերաինաստավորվում է Արիստիդ Մայոլի, Էմիլ Անտուան Բուրդելի, Սերգեյ Կոնենկովի քանդակներում, Պաբլո Պիկասոյի գրաֆիկայում:




Հայ անվեստում դիցաբանական ժանրի գոհարներից է «Անահիտ աստվածուհու» գլխաքանդակը: Հայ կերպարվեստի պարձանքն են հանդիսանում Ե.Քոչարի Սասունցի Դավթի արձանը և Հ. Կոջոյանի Սասունցի Դավիթ գրաֆիկական աշխատանքը:




Կրոնական ժանր

Հասարական գիտակցության ձև, հետադիմական աշխարհայացք, որը «ոչ այլ ինչ է, եթե ոչ այն արտաքին ուժերի ֆանտաստիկ արտացոլումը մարդկանց գլուխներում, որոնք իշխում են մարդկանց վրա նրանց ամենօրյա կյանքում, - մի արտացոլում, որի մեջ երկրային ուժերը վերերկրային ձև են ընդունում»։ Կրոնի կառուցվածքային տարերն են՝ կրոնական գիտակցությունը, պաշտամունքը և կազմակերպությունը։ Կրոնական գիտակցության հիմնական հատկանիշը հավատն է գերբնականի նկատմամբ, որը դրսևորվում է գերբնական էակների (աստվածներ, ոգիներ), բնական երևույթների միջև գերբնական կապերի (մոգություն, տոտեմիզմ), նյութական իրերի գերբնական հատկությունների (ֆետիշիզմ) գոյության ընդունմամբ, դրանց նկատմամբ հուզական վերաբերմունքով և պրակտիկ պատրանքային փոխհարաբերությամբ։ Կրոնական պաշտամունքի առարկան գերբնականն է, որը արտացոլվել է Կրոնական ժանրում : Կրոնական ժանրի ստեղծագործությունների սյուժեները վերցվում են Սուրբ գրքերից : Այս ժանրը բուռն վերելք է ապրել քրիստոնեության հաստատումից հետո, երբ աստվածաշնչյան թեմաներով արվեցին սրբապատկերներ, նրբաճաշակ մանրանկարներով զարդարվեցին Սուրբ գրքերի էջերը : Բյուզանդական արվեստում ժանրը արտահայտվել է խճանկաչների միջոցով : Լայն զարգացում է ապրել արևմտաերոպական արվեստում (ռոմանական, գոթական շրջան) :





Այս ժանրը նաև զարգացել է Կիևյան Ռուսիայում, հատկապես սրբապատկերային արվեստում: Կրոնական ժանրին են անդրադաձել նաև Վերածննդի վարպետները՝ (Ջոտտո, Լեոնարդո դա Վինչի, Ռաֆայել Սանտի, Միքելանջելո) ժանրը հասցնելով կատարողական բարձր աստիճանի:



Կրոնական ժանրը թերևս ամենալայն տարածում և զարգացում ստացած ժանրերից մեկն է հայ արվեստում: Քրիստոնեության ընդունումից և հայոց գրերի ստեղծումից հետո զարգացավ ձեռագրային արվեստը (Ռուսլին, Պիծակ, Մոմիկ և այլն) ,բացվեցին մանրանկարչական դպրոցներ:Կառուցվեցին վանական համալիրներ,եկեղեցիներ: Ճարտարապետության մեջ ի հայտ եկավ խաչաձև հատակագծով կենտրոնագնդեր շինության տեսակը,զարգանում է խաչքարային արվեստը ,որոնք բնորոշ են միայն հայ մշակույթին:



Գրականություն

<https://hy.wikipedia.org/wiki/բնանկար>

<https://thestrip.ru/hy/dlya-zelenyh-glaz/bytovaya-zhanrovaya-zhivopis-bytovoi-zhanr-zhanr-izobrazitelnogo-iskusstva/>

Լ. Ներսիսյան «Բնանկար» 2011թ

Ե. Գյուլմիսարյան «Արվեստի պատմություն» **սուղի** ձեռնարկ 2003թ

Ս. Երզնկյան, Ա. Բաղդասարյան «Կերպարվեստի բառագիրք»

Апраксина Н., Бытовая живопись, Л., 1959.

Никифоров Б. М., Жанровая живопись, М., 1961.

Русская жанровая живопись XIX века, М., 1961.

Русская жанровая живопись XIX — начала XX век

